

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբադրատան մէջ :

თბილისი. Редакція «Мшакъ».
Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“
ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է թիֆլիսում, նոյն ղրքրով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան դինը 10 բուբլի է, Վլենամովանը 6 բուբլի:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրոնկայա և Բաղդարնայա փողոցների ան-
կիւնում, Թամբակյուլի տանը):

կայսերությունն ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պետք է ղվմել հետևեալ հասցեով. ТИФЛИСТ, Редакция газеты «МПАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

ԽՈՒՄԱՊԻՐ-ՀՐԱՊԱՐԱՆԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ

ԲՈՎԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսիս ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր երիտասարդ իրա-
ւաքանները. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Մամուլի բողոքը Գեորգիայի դէմ. Ար-
տաքին լուրեր. —Հեռագրի մասին. —ԲՈՐՍԱ. —ՅԱՏԱ-
ՐԱՍԹԱԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ. Նամակ թիւր-
քացիք.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱԻԱԲԱՆՆԵՐԸ

Անցեալ տարւոյ «Մշակի» № 140-ի մէջ «Մի ուրիշ տեսակ հարստահարիչներ» վերնագրով յօդուածի մէջ խօսելով մեր գաւառական դատաստանական աշխարհի մէջ յայտնի «միլիոններ և բնիքներ» մասին, մենք մատնանիշ արեցինք այն տաւրէր երեւոյթի մը (կ'է ինչպէս այդ ինքնակոչ «միլիոն» (1?) միջնորդ հանդիսանալով դատաստանական վարչական հիմնարկութիւններէի և ժողովրդի մէջ, հարստահարում, կեղեքում, և մի և նոյն ժամանակ անբարոյականացում են այդ միամիտ ժողովուրդին։ Մեր յօդուածը վերջանում էր հնկեակալ խօսքերով. «կուեմ, այդ ֆիասակար անձանց զործուհնէութեան դէմ, հարց ֆիասակար»։

Բայց այդտեղ առաջ է դալիս մի ուրիշ հարց։ Ո՞ւր է դիմի ժողովուրդը այդ ինքնահոկնէրից իր երեսը դարձնելուց յետոյ, ո՞ւմ պաշտպանութեան

րակ հանել զրանց բոլոր կեղտոտ, բայց դադանի
մնացած գործերը, — ահա այն միջոցը, որով կա-
րելի է մի կողմից ժողովրդի աչքը բաց անել,
խակ միւս կողմից արգելք դնել այդ մեծապար-
անձանց մեծապար գործունեութեանը:

Այ՛ն, ժողովրդի այդ կասկածելի բարեկամ-
ն երբ դործունեութիւնը ոչնչացնելու համար,
անհրաժեշտ է բաց անել ժողովրդի աչքը, ան-
հրաժեշտ է ցոյց տալ այդ միաժամ ժողովրդին,
որ դործ սկսելով այդ տեսակ տղէտ, անխիղճ, որ
է է բարոյական սկզբունքից զուրկ միջոցներին և
աղ օ կ ա —բէջելին հետ, հա ընկնում է մի
անայտ հարստահարելի ձեռքը միայն, որը իրանց
լաւ ծծելուց, իր հիւլքը լաւ մոկելուց յետոյ
իրան ղէն կը ձգի, ինչպէս անպէտք կծեպ, որի
մէջ ոչինչ պիտանի հիւլք այլևս չէ մնացել: Այդ
տեսակէտից նայելով հարցի վրա, միանշանայն
անհրաժեշտ է հրապարակ զուրս բերել այդ տե-
սակ մարկանց բոլոր մուլք աբաբները, որ-
պէս զի ժողովուրդը նրանց պատկերը պարզ
կերպով տեսնէ, և զղուանքով իր երեսը դարձնէ
զոջանից:

Բայց այդտեղ առաջ է դալիս մի ուրիշ հարց:
Ո՞ւմ դիմի ժողովուրդը այդ ինքնակոչներին իր
հրեալ դարձնելուց յետոյ, ո՞ւմ պատասխանութեան

ᖃ ᕐ ᕐ ᕐ ᕐ ᕐ ᕐ ᕐ ᕐ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՅ

Կ, Պօլիս, 15 յունւոյարի

Երբ կը զրեմ այս նամակս արդէն կ'ըստական
և քաղաքական ժողովներն միասին խառն ժողով
կազմած ի Պատրիարքարան, նախագահութեամբ
Յարութիւն Սրբազանի, կարծօր խորհրդակցու-
թիւններ կ'ընեն ազգին արդի կացութեան վրայ
և կորոշեն թէ ինչ թա գ ո լ ի ր զրեւու է Բ.
Իրանն երբ նամակս վերջնական հաւանօրէն կա-
րենամ խորհրդակցութիւններն աւանդ և հաղորդեց:

Այս առեր խորհրդածութեանց առաքելայ կը մի կարևոր տեղեկութիւններ մի քէչ ուշ պիտի իմանան «Մշակի» ընթերցողը, բայց միանգամահ մեզը ներխիլ է:

Մեծ-խաղաղոսն անցեալ շաբաթ միջօրէին վերջ իւր մօտ հրաւրեց հետեւեալ անձինքն, որք թէ պէտես աղղին մէջ այժմ գործօն դեր մը չունին, բայց և այնպէս կը պատկանին այն դասուն որ կը վարէ միշտ աղղին դրօժերն, և որք թէ կապալարութեան ծառայութեան մէջ և թէ Պօլսոյ Հայոց մէջ կարևոր դիրք գրաւած են: Այդ չորս հրաւիրեալներն էին.

Ա. Ն ու ր ե ա ն Յ ո վ հ ա ն ն է ս է Ֆ է ն դ ի
Արդէն բաւական ծանօթ է ձեզ: Դեռ մի քանի քաջառաք առաջ Բաղաբական Ժողովոյ ատենապետն էր: Պետական երաճարագոյն խորհրդոյ անդամ է: Տառնասարու, Խոսքի և մէնէն Կոնստանտնուպոլսոյ

Թողլով ուրիշ տեսակէաներ, Պատրիարքարանը կը նկատէ այս դէպքերն իբր ամենամեծ բռնաբարութիւններ, Հայոց եկեղեցւոյ իրաւանց ի Թիւրքիա և ըստ այնմ պիտի ներկայանցնէ խնդիրը Բ. Դրան, որն արդէն այս չարթուտ մէջ շատ կը զբաղի այս հարցերով: Երկու կարևոր տեսակցութիւններ տեղի ունեցան ի Բ. Դուռն Գունուարի 9-ին շրաթով օր չորս երեկոյ Հայեր և յունեկարի 11-ին, երկու շաբթիք օր ցարութիւնս Պատրիարքը երկար տեսակցութիւններ ունեցան Մեծ-Եպարդոս Գեամարի փաշայի. հետ, նորա յատուկ հրաւիրանքն: Այս տեսակցութեանց արդիւնքը կարող չնդայ հազարդիւ (Մշակի) ընթերցողայ երեք օր առաջ մեկնող թղթատարով, վասն զի առաւօտուն փոթորկալից օդ մը զին բանտեց տանս մէջ և չը թողուց որ նամակս կարենամ ժամանակին հասցնել. կը ցաւիմ որ այսպիսի կարևոր տեղեկութիւններ մի քիչ ուշ պիտի իմանայ (Մշակի) ընթերցողը, բայց միանգամաւն մնղըը ներկիլ է:

Մեծ-Եպարզոսն անցեալ շաբաթ միջօրէն լեռի վր լծա հրաւրեց հետեալ անձինքն, ոյց թէ-պէտեալ ազգին մէջ այժմ գործոն դեր մը չունին, բայց ե այնպէս կը պատկանին այն դատուն որ կը վարէ միշտ ազգին գործերն, ե ոյր թէ կառավարութեան ծառայութեան մէջ ե թէ Պոլսոյ չափոյց մէջ կարեւոր դիրք գրաւած են: Այդ չորս հրաւրեալայնքն էին.

ԱՆՈՐԵԱՆՅՈՒԴՆԵՐԻ
ԱՐԴԷՆ ԲԱՍԿԱՆ ԺԱՆՈՒԹ Է ձեռը Գեռ մի քանի
ամիս առաջ Քաղաքական Ժողովոյ ատենապետն
էր։ Պետական բարձրագույն խորհրդոյ անդամ է։
Տաղանդաւոր, կորովի և մինչև իսկ յանդուգն։

և աջակցութեանն դիմի ժողովուրդը, քանի որ ամենիդպր Գործը անգամ ունենալով մի որևէ դատարանական կամ վարչական հիմնարկութեան հետ, նա անպատճառ կարօտ է փաստաբանի օգնութեան, նա ոչ մի քայլ չէ կարող անել, առանց փաստաբանի ղեկավարութեան: Գատարանական այժմեան հիմնարկութիւնների կաղմակերպութեան ծանօթ չէ մեր ժողովուրդը, և ծանօթ չէ կարող լինել. դատաստանավարութեան բարդ գործողութիւնները մէջ ոչ կարող է մտնել մեր հասարակ ժողովուրդը, և ոչ էլ կարող է հասկանալ նրա այն պահանջները. աւելացրէ՛ք, դրանք և այն հանգամանքը, որ ամբողջ դատավարութիւնը և բոլոր վարչական հիմնարկութիւնները գործողութիւնները կատարվում են ուսուցիչ լեզուով, և հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ տեղական աղգարանավորութիւնը, որը շատ քիչ է ծանօթ պետական լեզուի հետ, ամեն անգամ, երբ մի որևէ նոյն իսկ շատ հասարակ գործ ունի փաստաբանի հետ, ստիպված է ամենից առաջ փաստաբանի մօտ վաղել Այդպիսով ուրեմն փաստաբանների գոյութիւնը և օգնութիւնը մեր ժողովրդի համար ներկայումս ոչ թէ միայն հարկաւոր է, այլ գուցէ այնքան շատ է հորիւլաւոր, որպէս հարկաւոր չէ Ռուսաստանի և ոչ մի այլ մասում:

Արդ, **ո՞վ** **պէտք** է կատարի այդ կարևոր, և ժողովրդի շահերի համար մեծ նշանակություն ունեցող դերը: Կրկնում ենք, **ո՞վ** **պէտք** է պաշտպանե ժողովրդին մի շարք չարիքներից և հալածանքներից, **ո՞վ** **պէտք** է յանուն օրէնքի և արդարութեան՝ պաշտպանե դատարանին ղիմող հազարաւոր անձանց, որոնք ոչ [խօսել] պիտեն, ոչ բողոքելու տեղը դիտեն, և ոչ էլ անդրադառնալ նրանց:

Այն ալիսեղ է զգացվում պատրաստված և բարեխիղճ փաստաբաններին կարելի, որոնք միայն կարող են աղատել ժողովրդին իրանց անկող հարստաճարկներին ձեռքից: Բայց տարաբաղդաբար այդ պատրաստված փաստաբանները, մեր երեսասարդ իրաւաբանները, որոնք ղեկավարում վերադառնում են Լոկկաս, և որոնք միայն կարող էին այդ բոլորում օգտակւել լինել ժողովրդին, շատ ուրիշ կերպ են նայում այդ հարցի վրայ, և շատ հեռու են ժողովրդին անմիջապէս:

Իր ազգային գործունեությունը գովառտից և խիստ քննադատությունաց հաւասարապէս առարկայ եղած է միշտ: Այժմ թէպէտ Պատրիարքատանի ղեկավարներէն մին յայտնապէս, բայց իր ազնեցությունը շատ անգամ զգալի է, մանաւանդ որ Պետական խորհրդոյ կը ջնդ պաշտպան կը հետապնատ, ինչպէս կը տեսնուի, Պատրիարքարանի հաւանձնատնորհմանց պահպանման: Կըր Ատենապետ Բերայի թաղ. խորհրդոյ, խիստ փգտակար կը հանդիսանայ այդ կարեւոր թաղին, որուն մէջն է աղջկանց արուեստանոցն, ընդ որում արտաւթականք Ալէն. տիկին Մատակեանի որ իր արամաբականն ին առաւ:

Բ. Ս երվի էէն է քէն դի: Երբունի բը-
խէկ, անդամ օամանան Երեւոյտին, բայց
զատույ տիտղոս մը, վասն զի այդ մարմինն այ-
լում դոյութիւն չունի: Ուղղակի պետական ծա-
ւայութեան մէջ չէ ուրիմն և եղած ալ չէ, սա-
լայն միշտ սերտ բարեկամական յարաբերութիւն-
եր ունեցած է օամանան նախարարաց հետ: Քաջ
ծրանադէտ, տաղանդաւոր և համարձակախօս,
մեծ յարգ և համարում վայելած է օամանցոց
լուրմանէ և կը վայելէ, այդ յարգն ու համարու-
մը դործածած է յօգուտ ազգին: Խըր առնհասկե-
կէդ, Ժողովոյ, Քաղաքական Ժողովոյ, անգամ
այլ և այլ Ժողովոց, կաթողիկոսական Յանձնաժե-
տւոյ, Սերվիլէյն էֆէնդի ազդին մէջ զօրծննայ
մը, մը կատարած է Պատկուտելի անհմարու-
թիւն մ'է, որ ընդհանուր յարգանք և համարում
բերած է:

Պ. ԱՆԿԱՆ ԷՓԷՆԴԻ: Ղատական գործոց
ախարարութեան երկրորդ սխան—առաջինն ը-
պով նոյն ինքն ախարարը: Նախորդ թղթակ-

օղջաւէտ լինելուց: Մեր երիտասարդ իրաւաբանները, ինչպէս և առհասարակ մեր բոլոր մասնագէտները, միայն Թիֆլիսում կենտրոննայով, զուրկ են պահում դաւառները իրանց օգնութիւնից, այն դաւառները, որոնք կարօտ սրտով սպասում էին ինտելիգենտ ոյժերի, լինի դա բժիշկ, իրաւաբան, թէ անտեսապէտ, քանի որ զրանց միջոցով միայն կարող կը լինի ժողովուրդը գէթ մասամբ բժշկվել իր տնտեսական և բարոյական շատ անտերից: Բայց, տարադպեաբ, այդ ունեալ, ինտելիգենտ և մասնաւորէտ դաստարգրը դեռ. չարունակում է ծառ. աչքով նայել զաւառներին վրա. չարունակում է իր երջանկութիւնը և ապագան որոնել Թիֆլիսի մէջ: Այսօր Թիֆլիսում արդէն շատ փաստաբաններ պրակտիկա չունեն. այսօր Թիֆլիսում շատ իրաւաբաններ, բժիշկներ և այլ մասնագէտներ ոչինչ պրակտիկա չունենալով, և համարեա թէ ապրելու միջոցներից զուրկ մընալով, պատրաստ են իթէ կարելի լինէր և յարմար, ուրիշ գործեր կատարելու, պատրաստ են ուսուցիչ, հաշապահ, կօմիսիօներ և առևտրաւան լինելու, բայց դաւառները դնալ, և դրողվել իրանց մասնազդիտութեամբ, նրանք չեն կամենում Այդ մարդիկ չեն համոզում թէ դաւառներում իրանց գործ կունենան:

Բայց այդ սխալ և անհիմն համոզմունքն է, ընդհանրապես շատ մեծ հիմք կայ կարծելու, որ մեր նայն իսկ յեղունկած գաւառներում, ամեն մի տղեր ի շատէ բարեխիղճ բժիշկ և փաստաբան մեծ գործ կարող է կատարել իւր դրան մէջ համոզմունք համար, բաւական է միայն ուսումնասիրել մեր գաւառների այժմիան վիճակը:

Իդէ է աւազանութիւնն ոչ որ չէ պահանջում մեր այսմասն գոյր ծնական ուսեալ երկրտասարդութիւնից. անձնագործութիւն չը պէտք է գործեն մեր իրաւաբանները՝ դաւառուները զնաւոր լնդախաւառադը դա մի ուղիղ ճանապարհն է, որով ամեն մի մասնագէտ կարող է օգտուալ և շահաւակն կերպով ծառայել շնախ և առաջ իր անձինն, և ապա ժողովրդինը լիքն է մեր ուսեալ երկրտասարդութիւնը մտածում է ամենից առաջ իր անձնական շահախօյութիւնան մասին, հաւատարմեք, որ այդ քանի մէջ ամպոպոպուն կը գտնի դաւառութիւն, քանի որ Թիֆլիսում, ուր մտաւոր և առաջ

տրվեժեամբ ըստ բաւականին խօսած եմ այս նշա-
նաւոր օրէնսդէտի մասին: Եթէ ըսեմ որ ազգին
մէջ վաճառն էֆէնդիի նշանաւոր գործիչ մը հան-
դիւսացած է և ժողովրդականութիւնն կը վայելէ,
ճշմարտութիւնէ հեռացած պիտի լինիմ: Վաճառն
էֆէնդիի ինքն ալ կը յայտարարէր անցեալ օր
Եթե-Եպարդոսին թէ՛ երեսուն հինգ տարի է չէ
միջամտած ազգային գործերուն: Զեմ գիտեր թէ
հինչու համար այս պարագան պէտք է յանցանք
ըն նկատել: Վաճառն էֆէնդիի այն համոզման ու-
նի թէ՛ իբր տերութեանն պաշտօնեայ, ինքն իւր
պաշտօնին պէտք է նուիրէ զինքն, և թէ կրնայ
պատահիլ ստէպ, որ պարտաւորի կամ ազգին
շահները գտնել կամ տէրութեան շահերն, եթէ այս
երկու շահերն միշտ միմեանց հետ հաշտ պահե-
ու միջոց մը չը գտնուի: Արդ ինչ որ ալ գտնէ,
տարեկողձութեան հակառակ չարժած պիտի լինի,
ուրեմն պարզ չի որ ազատի այս դժուար կացու-
թիւնէն, չը միջամտելով ազգային գործերու: Ըն-
դամեկելով վաճառն էֆէնդիի սկզբունքին ուղղու-
թիւնը, կարելի չէ պաշարակի նորա ընթացքն
ոմ կարծեօք, վաճառն էֆէնդիի այն ընթացքն
գէտք էր զինքը ժողովրդական ընել: Բայց աստ
տեղ չէ խորհրդածութեանց. կը բաւականանամ
սել թէ՛ վաճառն էֆէնդիի իւր պաշտօնին մէջ
իշխոց գտած է թէ տէրութեան և թէ ազգին հա-
տարապէս օգտակար ըլլալ: Զօրաւոր պաշտ-
դան մը հանդիսացած է բոլոր այն հայ երիտա-
ւորդներուն, որք օսմանեան կառավարութեան
մէջ դատական պաշտօններ ձեռք բերելու հետա-
րուտ եղած են, և որք կարող և ընդունակ լինե-
լու գրականական տուած են: Շարիրտաւոր են այն
րիտարարողներն, որք վաճառն էֆէնդիի պաշտ-

դէն չարքանցեալ է: Տարաբաղաբար այդ ճշմարտութեան մէջ դեռ եւս չէ համոզուիմ մեր ուսեալ երիտասարդութիւնը, և շարունակում է խոյս տալ ժողովրդից, շարունակում է հեռու մնալ դաւաճաներէն, թէն խօսքով նա ցանկութիւն է արտայայտում օգտաւէտ լինելով ժողովրդին:

Բայց խօսք և գործ,—դրանք շատ հեռու կէտեր են, և մեր երիտասարդութիւնը,—թող ներքին մեզ նկատել,—դեռ գտնվում է այն անցողական շրջանի մէջ, որը կոչվում է «Ֆրադայից դէպքի գործ», և գուցէ այդ անցողական շրջանի մէջ պէտք է որոնել մեր երիտասարդութեան այդ կեղծ դրութեան այժմեան դադանիւրը....

10. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրվում են ներկայ գտնվել ընկերութեան հերթական նիստին, որ լինելու է այսօր, երեքշաբթի օր, յունվարի 26-ին, երեկոյեան 7½ ժամին: Պարագլուխները առարկաներն են. 1) ընթացիկ գործեր, 2) ղեկավարը պետական գիւղացիների ձեռքով Անդրկովկասում հողերը կապալով վերցնելու մասին թողարկում է և կողմնակի անձանց ներկայ գտնվելու:

Պ. Սարգիս փոխգնաց խնդրում է մեզ տպել հետեւեալ նկատողութիւնը: Աճքի առաջ ունենալով, որ հայոց ծխական երկրատնտեսական օրհանգիստների ծրագրում աւանդելի առարկաների մէջ մտցրած է և բնական պատմութեան դասաւորութիւնը, և որովհետեւ այդ առարկայի համար առանձին դասադիրք չը կայ հայոց լեզուով և ուսուցիչը ստիպված է առանց աշակերտի ձեռքը մի դիրք տալու, ինքն այս ու այն դրեքից իր առարկային վերաբերեալ նիւթեր ժողովել, պատրաստել ու պատրաստվել և ապա աւանդել,— ուստի ես կ'աւանդեմ եւ չուսում տպագրութեան համար կատարած կը լինի մի դասադիրք բնական պատմութեան, հայոց ուսումնարանների համար, որի մէջ ծրագրին համաձայն, բովանդակվելու են կենդանիների, բոյսերի և հանքերի նկարագրութիւնները, նրանց տուած օգուտը և վնասը: Այդ դասադիրքը կազմելիս ձեռքի տակ եմ ունեցել զբոյսի նիւթերի վերաբերեալ դասադան հեղինակութիւններ թէ հայոց և թէ ռուսաց լեզուներով:

Յունվարի 23-ին թիֆլիսի ժողովարանում կայացաւ կոնցերտ յօգուտ Զէյթունի հրկիզեալների: Ոչ մի ժամանակ ժողովարանի դահլիճները

պանդութեամբ դատարար, ընդհանուր դատախազ (բրքերբոր), ընդհանուր դատախազի օգնական և այլն պաշտօններու հասած են: Կարելի է ըսել թէ սոքա ամեն ալ խոցի մտքը իրենց պարտականութիւնները միշտ կատարած են, կարող պաշտօնեայնեք եղած են և մեծապէս օգտակար հանդիսացած տէրութեան: Ասոր հետ միասին այս պաշտօնեայնեքն մեծ մասն ազդին մէջ գործունեայ անձեր եղած են և են, և իրենց դէմ ոչինչ նախապաշարում չը կայ:

Գ. Տատեան Արթին պէյ: Թիւրքիոյ նշաւաւոր դիւանապետ. արտաքին գործոց նախարարութեան երկրորդ պետ, կայսեր մասնաւոր համարմանն ու սիրոյն արժանացած: Տատեան անունն արդէն թիւրքիոյ հայոց ամենախիղիւր անուններէն մին եղած է: Այդ ընտանիքն երկարատեան արքունի վաւարապետութեան պաշտօն վարած, սուլթաններու միշտ սիրելի եղած, այնքան բարիք մատուցած են ազդին Տատեանը, որ ամենուրեք համակրանք միայն վայելած են ու կը վայելեն: Մինչև ցայսօր Տատեանը ազդաւոր, կրօնաւոր, բարեպաշտ են: Երբ իսկ Արթին պէյ եկեղեցաւորութեան և բարեպաշտութեան բարի օրինակ մ'է, և այդ անձն երեւելի տաղանդ մ'է, քաջ Ֆրանսադէս և ինքն կը խմբագրէ արտաքին գործոց պաշտօնական կարևոր ծանուցադիրներն Ազգասէր և կրօնասէր անձ մը Արթին պէյ, որուն համար կը պատմեն թէ օր մը ծանր պարագայի մը մէջ ըսած է կայսեր թէ՛ ինքն իւր ազդն ու եկեղեցին կը սիրէ, հետեւաբար իւր կայսրն ու իւր տէրութիւնն, և ով որ իւր ազդին ու եկեղեցւոյն հաւատարիմ չէ, նա կարող չէ հաւատարիմ լինել իւր կայսրն ու տէրութեան:

Արթին պէյ երբեմն Ազգային ժողովոյ տեսնա-

մինք այդքան լի չենք տեսած. բառի բուն նշանակութեամբ դահլիճներում անեղ գցելու տեղ չը կար: Կոնցերտը շատ լաւ անցաւ: Երգչուհիներէն դարձեալ տիկին Եօզեֆովիչ ամենից շատ ծափահայերէն երկու երգերից յետոյ, տիկինը կրկնեց «Ո՛հ ինչ անուշ» արդէն մի անգամ երգած քանակը և բացի սրանից երգեց և չնձ համար չէ՛ յայտնի երգը: Նրա հայերէն գեղեցիկ արտասանութիւնը լսելով, մարդը հրաժարվում է հաւատալ թէ տիկինը հայուհի չէ: Կոնցերտի վերջում սիրողների և սիրողուհիների խումբը ազգային հագուստներով երգեց «Զէյթունցիներ» և «Վանցիներ» խորական երգերը: Յափառարարութիւններն և «բիսերներ» վերջ չը կար: Կոնցերտից յետոյ սկսվեցան պարեր և շարունակվեցան մինչև ժամը երկուսը կամ երեքը: Ինչպէս լսել ենք, երեկոյից ստացած զուտ արդիւնքը 1,000 ռուբլու հասած պիտի լինի:

Թիֆլիսի մարտական մէջ, սկսած յունվարի 25-ից և հետեւալ օրերին ներկայ ամսին, աճուրդով կը ծախվին գորգեր և արտասահմանեան (ստիական) ուրիշ ապրանքներ, որոնք յարժուին են զրաւված:

Բաթումից, պ. Գրիգոր Գրիգորեանցից ստացանք 10 ռուբլի յօգուտ ղէյթունցիներ: Նախկին 321 ռուբլու հետ կ'ունենանք խմբագրութեան մէջ 331 ռուբլի յօգուտ ղէյթունցիներ:

Տեղի պակասութեան պատճառով, մասնաւորապէս այժմ «Մշակը» շաբաթը միայն երեք անգամ է հրատարակվում, իսկ տպագրելու նիւթեր շատ ունենք, անկարող ենք տպագրել մեր լրագրի էջերում այն բոլոր անձանց ցուցակները, որոնք գումարներ են նուիրում յօգուտ ղէյթունցիների: Բայց ինչպէս լսել ենք, երբ ղէյթունցիների օգտին սկսված ժողովարարութիւնը կը վերջանայ, հրկիզեալ ղէյթունցիներին նպատակու համար թիֆլիսում կազմված մասնաժողովը ղեկավարութիւն ունի բոլոր նուիրատուների ցուցակները առանձին թերթերով հրատարակել և տարածել լրագրիցներին հետ: Այն ժամանակ մինք էլ կը յանձնենք մասնաժողովին մեր ձեռքում եղած նուիրատուների բոլոր ցուցակները, որպէս զի նրանք էլ տպագրվին բոլոր միւս ցուցակների հետ միասին:

ՔԱՆԱԲՈՒՆ Գիւղից մեզ դրում են, որ այդտեղի բնակիչներ՝ Աւաքել, Սմբատ և Թադէոս Տուրեան եղբայրները այս օրերս նուիրեցին իրանց ծնողի յիշատակին 50 ռուբլի յօգուտ Քանաքեռի

պետութիւնը: Եւ, սակայն բաւական ժամանակ է վեր է որ ուղղակի պաշտօն մը չունի ազդին մէջ. արդէն այնքան ծանրապէս զբաղած է, որ պարագայ վայրկեան մը իսկ չունի: Այս հայերն էին ան, որ անցեալ շաբաթ օր կը ներկայանային Մեծ-Եպարդոսին, նորա յատուկ հրաւիրանքով: Քանաքեռի փաշա կը յայտարարէ՝ նոցա թէ՛ վեհափառ կայսրն մասնաւոր հրամանաւ է, որ զիրենք կոչած է իւր մօտ «Մեր տէրը, կըսէ Մեծ-Եպարդոսը, շատ ցաւած է, որ հայ ազգը ջանքեր կընէ հեռանալու այն հաւատարմութիւնէն, զոր այսքան դարեր է վեր աւաղարդ պահած է առ օսմանեան դահն: Զանազան դաւաճաններու մէջ հայը յանձնաժողովները օ մ ո ի թ է ն ու ի—կազմած են, և այդ յանձնաժողովը ղովը սերտ յարաբերութեան մէջ են Եւրոպիոյ ալ և ալ կողմերն դառնող տաք գլուխ և վտանգաւոր հայոց: Եւ իբր ապացոյց այս բաժնեւորուն, Մեծ-Եպարդոսը ցոյց կուտայ իսկ մը նամակներ, ոյք խաղաղութեան միջոցին գտնուած են, և այդ նամակները կը հաստատեն Եպարդոսին ակնարկած յարաբերութիւններն, մասնաւորապէս Մարտիկի հետ—«Գոհը, կը շարունակէ Քանաքեռի փաշա, բարձրագոյն պաշտօնեայնեք օտանեան տէրութեան, աւագանի հայ ազդին, որպէս որ կայսրն կողմանէ այսքան փառաց և պատուով արժանացած էք, ինչպէս կարելի է որ ուշադիր չըլլաք ձեր ազդին մէջ տեղի ունեցած այս ցաւալի դէպքերուն և այդ մասին բնաւ մեղ բան մը ըսած չըլլաք»:

Հրաւիրեալներու պատասխանները կամօրհինմ աստ, առանց ըսելու թէ ոչին է իւրաքանչիւրին խօսքն, վառն զի դուք միայն խօսքը միայն վերադրուի և այսպէս չիտրութեանց տեղի տրուի:

հայոց ծխական դպրոցի թղթակիցը ցանկութիւն է յայտնում, որ ուրիշները հետեւն Տուրեան եղբայրների օրինակին:

Կ. Պօլսից, յունվարի 16-ից, «Հիւսիսային գործակալութիւն» մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում է հետեւալը. «Մեծ-վրդը պահանջում է հայոց պատրիարքի, որ նա հրաւիրէ հայոց հոգևորականութիւնը և հայ ժողովրդին՝ Սուլթանին հաւատարմութեան երդում տալու: Պատրիարքը պատասխանեց, որ ամենից առաջ պէտք է վերականգնեցվին հոգևորականութեան արտօնութիւնները»:

Շուտով պետական խորհրդի մէջ պէտք է ընկնի Կովկասեան բժշկական գլխաւոր վարչութիւնը վերջնականապէս լուծելու հարցը: Այդ վարչութեան վերաբերեալ բոլոր գործերը, ինչպէս հարցը ընդհանուր Մօսկվայի լրագիրները, կենթարկվին ներքին գործերի մինիստրութեան բժշկական գեպարտամենտին:

Հին-ՆԱԽԻՋԵՆԻԱՆԻՑ մեղ գրում են. «Մեր ժողովրդի մէջ ընթերցանութիւնը այնքան ընկած դրութեան մէջ է, և ընթերցանութեամբ պարագայելու դժուարութիւններն էլ այդ յետքեւած մեռած քաղաքում այնքան շատ են, որ վաղուց արդէն միտք է ծագել այստեղ մի ընթերցարան հիմնելու, որտեղ ցանկացողները կարողանային կարդալ լրագիրներ և ձեռք բերել գրքեր: Ընթերցարանի հիմնարկութեան հարցը, բարեքաղաքար, այժմ բաւական առաջ է գնացել, նախաձեռնութեամբ Բարեգործական ընկերութեան այստեղի ձեռն: Բարեգործական ընկերութեան անդամները իրաւունք կունենան ձեռքար օգտվելու ընթերցարանից: Ընթերցարանի ծրագրը արդէն ուղարկված է Բարեգործական ընկերութեան թիֆլիսի կենտրոնական վարչութեանը, և անկասկած կենտրոնական վարչութիւնը կը շտապէ իր հաւանութիւնը տալու մի այդպիսի օգտաւէտ գործի համար, որը կարող պիտի լինի բաւական նպաստել մեր ժողովրդին՝ դուրս գալու իր մոտաւոր մեռելութիւնից»:

Պետական կառավարման մինիստրութիւնը յղացել է մի շատ համակրելի միտք, որը թէն նոր չէ, բայց մինչև այժմ դեռ գործածութիւն չէ գտել: Մինիստրութիւնը կամենում է գիւղական ուսուցիչներին տալ զոնէ մի թիթի գիւղատնտեսական ուսում: Այդ նպատակին երկու տեսակ կարելի է հասնել. դրա համար կամ պէտք է վարձպետական դպրոցներում մտցնել գիւղատնտեսական գիտութիւնների ուսուցումը և կամ Գիւրին է նաև ձեռք ենթադրել թէ կարող չեն ոչ մանրամասնաբար և ոչ յայտնուած կարգաւ առաջ բերել տրուած պատասխաններն: Տեսակցութիւնը ժամ ու կէս տեւած է, ինչ որ ըսուած է կրնան դրաւել «Մշակի» մի բանի համարներն: Կը համառօտեմ ճշգրտաւ:

Հրաւիրեալը կը յայտարարեն թէ՛ անշուշտ իրենց անձնական հաւատարմութիւնն և անձնութիւնը առ վեհ. Կայսրն և առ տէրութիւնն, կասկածի ներքե չէ: Ինչ որ են իրենք, ինչ զիրք, ինչ փառք ու պատիւ ամեն ալ կը պարտին իրենց կայսրն: Հետեւաբար ինչ որ ալ ըսեն իրենք, կը նկատուի անշուշտ իրենց ուղղամիտ զբաղման թաքմանութիւնն:

Այս յայտարարութիւնն ընկելով հրաւիրեալը կը խօսին այն յանձնաժողովներու մասին, որոց համար անհարկութիւնները ըրած էր Մեծ-Եպարդոսը: Բայց չորսն իրենց կարծեաց մէջ համաձայն չեն լինի: Երկուքը տարբեր կարծիք կունենան, երկուքը տարբեր:

Երկու էֆէնդիներ կը յայտարարեն թէ՛ այդ յանձնաժողովներուն, ըլլան օսմանեան գաւառներու մէջ թէ՛ Եւրոպայի քաղաքներու մէջ, բնաւ կարևորութիւն ընծայելու չէ տէրութիւնը, յիմար անձեր են, սրբկաներ, որոց խնդ ու խելաւոր գործերը երբեք ազդեցութիւն մը չունեն ազդին վրայ, երբեք հետեւութիւն մը չեն կրնա արտադրել. պէտք է ուշադիր չըլլալ անոնց, և անհպարտ տեսնուի որ ինքնին պիտի մարին իշխան, անհետ պիտի ըլլան, ծաղու և արհամարհանաց առարկայ դառնալով:

Միւս երկու էֆէնդիները տարբեր կարծիք կը յայտնեն: Նրանք կը կարծեն որ այդ եղած շարժմանց, կազմուած յանձնաժողովներու, գրաւուած

պէտք է գիւղական վարժապետներին մի յայտնի ժամանակով ուղարկել գիւղատնտեսական դպրոցները՝ վարժելու և ուսանելու համար: Այդ հարցի լուծման համար մինիստրութիւնը, ինչպէս լսել է «Новое Обозрение» լրագրից, տեղեկութիւններ է հաւաքում հարկաւոր տեղերից:

Մի բանի տարի է արդէն, որ Անդրկովկասի մի բանի կողմերում, վաճառականները սկսեցին մեծ քանակութեամբ չափի չ ուղարկել Օդէսա: Բայց յայտնի չէ, թէ ինչ պատճառներով այդ գործը աջողութիւն չը գտաւ, և չամիչի արտահանութիւնը մեր երկրից փոխանակ տարուց տարի աւելանալու, մնաց իբրեւ մի անաջող փորձ միայն: Դորա հակառակ, ինչպէս հարցը ընդհանուր կան ուսումնական լրագիրները, Անդրկասպեան երկրում Օդէսայի վաճառականների գործակալները մեծ քանակութեամբ առնում են տեղական չափի չ և ուղարկում են Օդէսա: Ինչպէս երևում է, չափի չ առնուող Անդրկասպեան երկրում աւելի աջող ապագայ պէտք է ունենայ:

Ամսիս 24-ին կայացաւ Կովկասեան Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը թիֆլիսի դուռնայի դահլիճում, որին ներկայ էին մինչև 16 անդամ: Նախագահում էր պ. Ս. Արծրունի: Ժողովը հաստատեց ընկերութեան 1886 թվականի հաշիւը և 1888 թվականի համար պատրաստած նախահաշիւը: Այդ նախահաշիւով մուտք սպասվում է 4,500 ռուբլի: Այդ գումարը սպասվում է հետեւալ աշխատանքից. այդ գումարի տուկոտ՝ 1,500 ռ. տարեկան անդամաւճար՝ 1,000 ռ., պարահանդէսներից և ներկայացումներից՝ 1,500 ռ., անցեալից մնացորդ կայ 277 ռ. 41 կօպէկ, նրբէրներ՝ 222 ռ. 59 կօպէկ: Մուտքի համապատասխան ծախս նշանակված է 4,500 ռուբլի, որից 2,220 ռուբլի ուսումնարաններին, ուսանողներին և աշակերտներին նպաստ, բարեգործութիւնների համար 1,555 ռուբլի, և մնացածն էլ զիւսական և այլ մանր ծախսեր: Բարեգործական ընկերութեան անձեռնմխելի դրամաւորները կայ թվականի սկզբում հասնում է 25,670 ռուբլու: Նոյն նիստում ընդհանուր ժողովը ուղարկութեան առնելով Հին-Նախիջևանի տեղական ձեռն ուսումնական ընկերութիւնը՝ այդ քաղաքում մի ընթերցարան հիմնելու մասին, հաստատեց ընթերցարանի ծրագիրը: Կարգադիւցաւ Բարեգործական ընկերութեան Շուշու ձեռն: 1888 թվականի նախահաշիւը, և մի յայտարարութիւնը, որով ցանկութիւն է յայտնվում Շուշում մի օրերոցաց Արհեստագիտական դպրոց հիմնելու, խնդրելով այդ գործի համար թիֆլիսի կենտրոնական վարչութիւնից տարեկան 300 ռուբլի նպաստ: Ժողովը

թողութեան պէտք է կարևորութիւն ընծայել: Այս իրենք ալ համաձայն են, որ հայ ազգն միշտ հաւատարմութեան վերա զգացումներ կը տածէ առ օսմանեան կայսրութիւնն և այդ զգացմանց ապացոյցները կուտայ, սակայն պէտք է ինքնին հարցնել թէ՛ ինչպէս երբեմն այսպիսի շարժումներ բնաւ զոյգութիւն չունեն և այժմ սկսած են երեւի Մարմնոյ մը վրայ երբ փաթիկ վերքեր տեսնուին, մարմինն որքան ալ առողջ երևի, բայց և այնպէս այդ վերքերն արդիւնք են հիւանդութեան մը, զոր պէտք է դարմանել: Այդ յանձնաժողովներն ալ, իրենց գործերն ալ որքան ալ կեղտոտ գործեր համարուին, բայց և այնպէս պէտք չէ ուղարկութիւն վերալին:

Ինչպէս կը տեսնուի, հայ էֆէնդիները, թէ՛ պէտ շատ նըրքութեամբ, բայց և այնպէս հասկացուած են Մեծ-Եպարդոսին թէ՛ կառավարութիւնը պէտք է հետամուտ ըլլայ թէ՛ ինչ են այն ներքին պատճառները, ոյք դժգոհութիւն կը պատճառեն հայոց և տեղի կուտան տէրութեան դէմ անախորժ շարժմանց: Կը հասկցնեն նաև թէ՛ ազգ մը որքան ալ հաւատարիմ ըլլայ, բայց և այնպէս պէտք չէ գնա դժգոհ պահել: Եւ տկարներն ալ կրնան ծայրայեղութեանց դիմել, երբ յուսահատին:

Այս նկատողութիւններն ընկելով հանդերձ էֆէնդիները կընդունին նաև թէ՛ կառավարութիւնը լուսաւորութեան պէտք է հետևողական և անհպարտ տեսնուի որ ինքնին պիտի մարին իշխան, անհետ պիտի ըլլան, ծաղու և արհամարհանաց առարկայ դառնալով:

Դրանց հետեւութիւն մը չեն կրնա համար Պօլսիս ձեռքաւորեալներն և գտնուած թղթակցութիւններն

վի մէջ այդ դպրոցը հիմնելու և 300 ռուբլի նը-
պաստ տալու մասին տեղի ունեցան վիճարանու-
թիւններ, որից յետոյ վճովեցաւ հաստատել Շու-
շու ճիւղի 1888 թ-ի նախահայրը, 300 ռուբլի
նպաստ տալու հարցը խորհրդի կարգադրութեան
թոյններով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ԲՈՂՈՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՄ

Եւրոպական մասուլի անկախ մասը ներկայու-
մըս ընդհանրապէս այն միտքն է յայտնում, որ
գերմանական կառավարութիւնը անդադար դժ-
գոհութեան պատճառներ է տալիս հարեան պե-
տութիւններին, և դրանով աւելի է մեծացնում այն
պատերազմական երկիւղը, որ այսօր ծանրացել
է ամբողջ Եւրոպայի վրա: Կառավարութեան և Շնեյթ-
լի միջնադէպքերը, որոնք քիչ էր մնացել պատե-
րազմի պատճառ էին դառնում, ինչպէս այժմ
պարզված է, գերմանական կառավարութեան
սաքաւ և որոգայթներ էին: Մի նոր դժգոհութեան
խնձոր է գցել այժմ Բիսմարկի կուսակցու-
թիւնը չվեցարական կառավարութեան առաջ:
Խնդիրը հետեւեալն է. գերմանական կառավարու-
թիւնը ներկայումս աշխատում է երկարացնել
սօցիալիստների դէմ եղած օրէնքների գործա-
դրութեան ժամանակամիջոցը. նա հետեւում է ա-
մեն տեղ սօցիալ-դեմոկրատների, անարխիստների
գործունէութեանը, և այդ նպատակով մինչև ան-
գամ գործակալներ և լրտեսներ էր ուղարկել Շը-
վեյցարիա, որտեղ կենտրոնացած է անարխիստ-
ների գործունէութիւնը: Գերմանական լեյստա-
զի սօցիալական կուսակցութեան երկու պարա-
զուկները՝ Բէքէ և Ջինգեր զինվում Յիւրիի ուս-
տիկականական պաշտօնային՝ այդ մասին տեղե-
կութիւն էին խնդրել Ոստիկանական պաշտօ-
նեան տուել էր այդ տեղեկութիւնը: Բէքէ և
Ջինգեր այդ մասին յայտնեցին բացարձակապէս
լեյստազի մէջ, և այդ բանը տեսնելով՝ մի-
նիստը Պետական գործակալութիւնը գործակալ-լրտեսներ
է ուղարկել Շվեյցարիա: Մինիստրը մի և նոյն
ժամանակ այն միտքը յայտնեց, որ գերմանալի
է, թէ ինչպէս չվեցարական կառավարութիւնը
յանձնառու է եղել պատասխանել Բէքէի և Ջին-
գերի հարցմունքներին, և վերջումն էլ աւելաց-
րեց, որ ինքը կը դիմի պետական կանցլէրին՝ իշ-
խան Բիսմարկին, որպէս զի նա այդ մասին զըժ-
գոհութիւն յայտնի չվեցարական կառավարու-
թեան, և այժմ Վերմանիան բողոքում է այդպի-
սի աններելի վարմունքի դէմ: Այդպիսով Գեր-

մանիան իր յարաբերութիւնները լարում է և Շը-
վեյցարիայի հետ, որը միշտ չէզոք է եղել վերջին
քաղաքական փոփոխութիւններին, և միշտ հակառակ
Բիսմարկի քաղաքականութեան: Եւրոպական ան-
կախ մասուլի սրտեղութեամբ է մասնաինչ ա-
նում այդ դէպքի վրա, մեղադրելով դրա մէջ էլ
գերմանական կառավարութեանը: Միջազգային
յարաբերութիւնները մէջ այդպիսի դիրք բռնելով
գերմանական կառավարութիւնը աւելի ու աւելի
է լարում հարեան երկրների յարաբերութիւննե-
րը. իսկ այդ յարաբերութիւնները լարելը, որ
կողմից էլ որ քննէք, օգտակար չէ ոչ մի պետու-
թեան համար: Միմիայն այդ յարաբերութիւններ
լարելու պատճառով է, որ այսօր Եւրոպան
սպառնալից դրութեան մէջ է, և այդ ա ն-
տ ա ն է ի սպառնալիցութիւնը ոչ թէ միայն չէ
թուլանում, այլ և աւելի սաստկանում է, որով-
հետև դեռ նորերն գերմանական լեյստազի առաջ
դրվեցաւ 300 միլիոնի փոխառութեան նախա-
գիծը՝ սպառնալիցութիւնը շարունակելու համար:
Մի կողմից դժգոհութիւններ յարուցանել և յա-
րաբերութիւնները լարել, իսկ միւս կողմից սպա-
ռնալիցութիւնը, — ահա գերմանական կառավարութեան
Եւրոպային ցոյց տուած ծառայութիւնը, որի դէմ
անդադար բողոքում է թէ մասուլի և թէ հասա-
րակաց կարծիքը....

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Բերլինում պատրաստութիւններ են տեսն-
վում, թողա՞ծա՞նայ իշխանին հանդիսաւոր կեր-
պով ընդունելու համար, երբ նա կը վերադառ-
նայ Պրուսիայի մայրաքաղաքը:

— Պոլսից հեռագրում են Պետերբուրգի լրա-
դիրներին հետեւելը. «Այստեղ մահա՞նտական
ազգայնականութեան մէջ յուզմունք է նկատուել»:
Բայց թէ ինչ պատճառով է առաջ եկել այդ
յուզմունքը, այդ մասին ոչինչ չը կայ յիշեալ հե-
ռագրիներին մէջ:

— Բերլինից հեռագրում են, որ պատերազմա-
կան լրագրողից փոխառութեան նախագիծը բեյ-
խտագի մէջ պաշտպանելու դրծը ինքը իշխան
Բիսմարկ յանձն առաւ:

— Սօցիալիստների դէմ եղած օրէնքների գոր-
ծադրութեան ժամանակամիջոցը երկարացնելու
առաջարկութիւնը մեծ աղմուկ բարձրացրեց գեր-
մանական լեյստազի մէջ, սօցիալիստ Ջին-
գեր, մի երկար ճառ ասեց այդ օրինագծի դէմ:
Ջինգերին պատասխանեց մինիստր Պետական
և այն միտքը յայտնեց, միմիայն որ բացառիկ օ-
րէնքները կարողացան պահպանել Գերմանիային
սօցիալ-դեմոկրատների կատաղի պրօպագանդայից

ու հրատարակութիւններն: Այդ յանձնաժողովի
նախագահն է Շահպաղ էֆէնդի, որ անցեալ ա-
մառ դժբաղդ պարագայներու ներքե իսլամական
կրօնն ընդունեց. բայց ուրիշ հայ պաշտօնեային
կը կանչուին շատ անգամ յանձնաժողովայ կող-
մանէ թարգմանելու համար հայերէն գրութիւն-
ներն:

Էֆէնդիներն մին կը յայտարարէ թէ Շահպաղ
էֆէնդի ընտրութիւնը շնորհակալ է կառավա-
րութեան երկու տեսակետով: Առաջին՝ Շահպաղ
էֆէնդի ռիս ունենալով իւր նախկին կրօնակցաց
դէմ պիտի ջանայ որ ձերբակալեալները իբր մե-
ղապարտ ցոյց տայ և հաստատէ թէ՛ հայոց մէջ
իրական շարժում կայ ընդդէմ տէրութեան: Արդ՝
եթէ ձերբակալեալները մեղապարտ չեն իրօք, ե-
թէ չը կայ ոչ և է շարժում ընդդէմ կառավարու-
թեան, միթէ՞ օգտակար է կառավարութեան որ
խարստի, ոչ ապաքին ստոյգ տեղեկութիւններ ու-
նենալը կառավարութեան համար անհրաժեշտ
պէտք մ'է: — Երկրորդ՝ հայ ազգը խորապէս կը
վշտանայ տեսնելով որ իւր մի նախկին կրօնակի-
ցին այսպիսի կարևոր պաշտօն մը կը ստանայ լոկ
այն պատճառաւ որ իւր հաւատքն ուրացել է,
ազգն իրեն համար նախադիմը մը կը համարի
այս և կը կատարին հայերը տեսնելով որ իրենց
հաւատարմութիւնը կամ անհաւատարմութիւնն
հաստատելը կը յանձնուի մի անձի որ կը համա-
րուի իրենց թշնամին:

Արդ՝ կը հետեցնեն, երբ կառավարութիւնը
այս օրինակ անօրինութիւններով դժգոհութեան
առկութիւն կը հայթայթէ հայոց, ինչպէս կրնան
իրենք ազգին խօսք հասկցնել:

Սակայն, կըսեն, մասնաւոր և զուցէ դիպու-
ծական է Շահպաղ էֆէնդիի ընտրութիւնը, բայց

և դրա հետեւեալներէ: Իր ճառի վերջում մի-
նիստը ակնարկեց և այն տեղեկութիւնները վը-
րա, որը ստացել են չվեցարական կառավարու-
թիւնից սօցիալիստ Բէքէ և Ջինգեր, այն գոր-
ծակալների արարքների մասին, որոնք, գերմա-
նական կառավարութեան կարգադրութեամբ, ե-
րևում են Շվեյցարիայում հետեւելու անարխիստ-
ների դրծունէութեանը:

— Հիւսիսային գործակալութիւնը՝ հեռա-
գրում է մեզ փարիզից հետեւելով փարիզի «Na-
tional» լրագրից հաղորդում է, որ Ֆրիշե ներկա-
յացրած է եղել այս օրերս ռուսաց դեսպան
բարոն Մորենհէյմին: Փետրվարի 13-ին բարոն Մո-
րենհէյմ ներկայ կը գտնուի Ֆրիշեի ճաշկերոյթին
«Temps» լրագրից խօսելով այդ լուրի մասին, ա-
սում է որ պէտք է ենթադրել որ Մորենհէյմ ա-
ւելի պատուաւոր կերպով կը հրաւիրվի ճաշին,
քան թէ դիպլոմատիական մնացած ներկայացու-
ցիները:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի: Պետական խորհրդի
ներկայ նստաշրջանի մէջ վերջնականապէս կը
վճռվի հանդարտութեամբ տէրերի կրեդիտը մեծաց-
նելու հարցը: «Грѣданинъ» լրագրից հաղոր-
դում է, որ ներքին գործերի մինիստրի օգնական
Պէվէի նախագահութեամբ կազմվող յանձնաժո-
ղովի մէջ, — որի նպատակն է քննել այն միջոց-
ները, որոնցով կարելի է օգնել երկրագործու-
թեանը, — կը մտնեն ուղղակի հարկերի դեպար-
տամենտի դիրեկտորը և երկրագործութեան դե-
պարտամենտի դիրեկտորը. կը հրաւիրվեն նոյն-
պէս և երկրագործների նախագահի ընտրու-
թեամբ: «Новое Время» լրագրի խօսքերով նա-
յելով, ֆինանսների մինիստրութեան մէջ մի
յանձնաժողով հիմնելու լուրը՝ արտասահմանեան
բարձրագին մարտահարկի վերցնելու կամ քաղ-
նելու վերաբերութեամբ հաստատում է: Պետեր-
բուրգ են կանչված Մոսկվայի մանուֆակտուրա-
յին խորհրդի երեք էկսպերտները: «Новости» լը-
րագրից հաղորդում է, որ փետրվարի 15-ից մի-
չև 25-ը Մոսկվայում կը կայանայ ալիւր աղողնե-
րի ժողովը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի: Հրատարակված է
մինիստրների մասնաժողովի հետեւեալ կարգա-
դրութիւնը. 1) հաստատել հաղորդակցութեան
ճանապարհների մինիստրի որոշումը, որով, տ-
ուանց առանձին թոյլտուութեան արգելում է եր-
իշխանութիւնը տկարացնելու քաղաքականութիւ-
նը: Իրենք այն կարծիքը չունին թէ նպատակաւոր
լինի Սահմանադրութեանը Սոցիալիստներու հրո-
վարականութիւնը շնորհելով թոյլտուած են քրիս-
տոնէից իսլամ պետութեան մը մէջ կրօնական
ազատութիւն վայելել և զո՛ւ մնալ: Մինչև ցարդ
տէրութիւնը պատճառ. մը չէ ունեցած դժգոհ-
ւելու շնորհաւած այդ իրաւունքներէն. քրիստո-
նէական զո՛ւ մնացած են կառավարութիւնէն, և
կառավարութիւնն ալ մեծ տաղտուկէ մը ազատ
մնացած է, առանց այդ առանձնաշնորհութեան
ամեն ատեն կրօնական տեսակետներով վէճերն
անպակաս պիտի լինէին Պատրիարքներու և կա-
ռավարութեան միջև, ինչպէս այժմ կը տեսնենք
ձուլիչ Տիգրանի խնդրոյն առթիւ, մէկ կողմ Շէյխ-
իւլ-իւլամ, միւս կողմ Պատրիարքը:

Սակայն ենթադրելով իսկ թէ առանձնաշնոր-
հութեան ջնջումը օգտակար համարուի կառա-
վարութեան, ոչ ապաքին ամեն օր անընդհատ
դժտութիւններ կը ծագին, վասն զի վերջապէս
քրիստոնէական ալ զիւրութեամբ չեն ուզել հրա-
ժարիլ այն իրաւունքներէն զոր դարեւն ի վեր
կը վայելէին Այդ դժտութիւններն ամեն ատեն
դժգոհութիւնը վառ կը պահեն ոչ միայն հայոց,
այլ Թիւրքոյ ըստ քրիստոնէից մէջ, և ընկալան
է որ Օսմանեան տէրութեան թշնամիներն ուզեն
օգուտ քաղել այդ դժգոհութիւններէն: Արդ ի-
րենց համոզմամբ որքան աւելի կառավարութիւնը
յարգէ քրիստոնէից առանձնաշնորհութեան, այն-
քան աւելի օգուտ կը քաղէ:

Պատրիարքներու իշխանութիւնը տկարացնելու
քաղաքականութիւնն ալ տէրութեան համար շատ
չհաւար չը նկատուի իրենց աչքին: Պատրիարք-
ները, կըսեն, ազգին և տէրութեան միջև միջ-

կաթոլիկներին քաջանելու այն ցորենի բուսնի
տարիքը, որոնք մտցնում են նաւահանգիստները
և բերում են դէպի արևմտեան ցամաքային սահ-
մանը. 2) տարիքների փոփոխութեան հարցի ա-
մենամօտիկ քննութիւնը յանձնել մի առանձին
խորհրդի, որը կը կազմվի հաղորդակցութեան
ճանապարհների, և պետական կառավարների մի-
նիստներից, պետական կոնտրօլներից և ֆինանս-
ների մինիստրներից, նախագահութեամբ պետա-
կան տնտեսութեան դեպարտամենտի նախագահի
և 3) թոյլ տալ հաղորդակցութեան ճանապարհ-
ների մինիստրին գործաժուկեան մէջ մտցնել այն
տարիքները, որոնք խորհրդի կողմից աւելի նպա-
տակարար համարված կը լինեն, յայտարարե-
լով դրա հետ միասին նոր տարիքներ նշանակե-
լու մասին խորհրդի կողմից նշանակված ժամա-
նակամիջոցի համար:

ՎԻԵՆՆԱ, 23 յունվարի: «Fremdenblatt» լրա-
գրին հեռագրում են Սօֆիայից, որ Թիւրքական
սահմանի վրա հաւաքված ապստամբներից, որոնք
պատրաստվում էին անցնել Թիւրքաց սահմանը,
Բուրգասի և Լսկի-Չաղայի շրջաններում ապստամ-
բութիւն յարուցանելու համար, — 41 հոգի ձեր-
բակալեցան Թիւրքաց իշխանութեան ձեռքով, և
ուղարկվեցան Ալբանիայ:

ԲՐԻՒՍՍԷԼ, 23 յունվարի: Բօլշաքիայի կառա-
վարիները յանձնարարեցին այստեղի դրամահա-
տական տանը՝ Նիկիւլից բողոքական դրամ պատ-
րաստել:

ԼՕՆԴՈՆ, 23 յունվարի: Կատարանը այսօր
դատաւարեց դիւնափո գործածող կողմնակից և
Գարկինսին բանտարկութեան, իւրաքանչիւրին
15 տարով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի: Ժողովրդական
լուսաւորութեան մինիստրի կարգադրութեամբ,
Պետերբուրգի համալսարանի վարչութիւնը, սկսե-
լով համալսարանի մէջ դասախօսութիւնները,
հարկաւոր է համարում մասնաինչ անել ուսա-
նողներին, որ, գնահատելով իրանց կրթութեան
ժամանակը, և համոզված լինելով կարգապահու-
թեան անհրաժեշտութեան մէջ, նրանք պարտա-
ւոր են յետ կանգնել ժողովներում մասնակցե-
լուց: Այդպիսով, իւրացի և իրանց ուսումը շա-
րունակել ցանկացող ուսանողները, որոնք, ան-
կապած, ահազին մեծամասնութիւն են կազմում,
պարտաւոր են բարոյապէս ազդելու իրանց ոգե-
ւորվող ընկերներին վրա, և դիմադրելու այն բո-
ւր փորձերին, որոնք կը ձգտեն խաղաղութիւնը
խանդարելու: Իսկ եթէ անկարողութիւնների
պատճառով, որոնք կը խանդարեն դասախօսու-
թիւնների շարունակելը, հարկաւոր լինի պարապ-
մունքները ընդհատել, այն ժամանակ, անկարող-

ներդնել են, և կը հսկեն ազգին վրայ, դիմաւոր
թէ՛ որքան մեծ պատախաճառութիւն կայ ի-
րենց վրայ առաջի Գրան, միշտ աչալուրջ գտն-
ւելու պարտական են, բայց իրենց այդ պարտա-
կանութիւնն առ կառավարութիւնն արդիւնաւոր
կերպով ի-գործ դնելու համար ընդարձակ իշխա-
նութեանց պէտք ունեն. արդ երբ այդ իշխանու-
թիւնն իրենց չը տրուի, իրենք ալ կը տկարանան
և անգոր կըլան իրենց պարտականութիւնը կա-
տարելու: Եկեղեցական կազմակերպութիւնը դի-
մաւորական կազմակերպութեան նման է և հիմն
հնազանդութիւնն է: Ստորագրուած եկեղեցական
մը չը հնազանդի Պատրիարքին, և Պատրիարքը
կայսերական հրովարակներու կռթնած կը դիմէ
Գրան և կը խնդրէ որ այդ անհնազանդը Պոլիս
բերուի (կը խօսեն Շահպաղեանի վրայ) և կա-
ռավարութիւնը կը մերժէ կատարել Պատրիարքի
այս առաջարկն, որ նորա իրաւունքն է: Արդ՝
երբ Պատրիարք մը կը զրկուի այն իրաւունքէն
զոր ունի իրեն ստորագրանքի մը նկատմամբ,
երբ այդ ստորագրանքը կը յաղթանակէ Պատ-
րիարքին, ինչպէս կըլէք որ այնուհետեւ Պատ-
րիարքն ազդեցութիւն ունենայ քահանայներու,
վարդապետներու, եպիսկոպոսներու վրայ, և ա-
նոնց հրամանները տայ ու աղբը կառավարէ:
Պատրիարքն օյսպէս յուսահատեալ, ջլատեալ,
դժգոհ կը մնայ, կարող չըլլալ գոհ սրտիւ իւր
իշխանութիւնը վարել և եկեղեցականը ու աշխար-
հականը մնալով անզուլի, անտի կրնան ծագիլ
կառավարութեան համար անախորժ դէպքեր: Ո՛չ
ապաքին մինչև ցարդ տէրութիւնը յարգելով
Պատրիարքներու իշխանութիւնը մեծ-մեծ օգուտ-
ներ քաղած է:

(Կը շարունակվի)

Թիւնները մէջ մասնակցողներին պատճելուց զատ, բոլոր ուսանողներին համար կիսամեակը չը պէտք է հաշուել, և թշուառները տալը կը դադարեցնուի «Новое Время» լրագրի մէջ տպած լուրը, որը վերաբերում էր համալսարաններում դաստիարակութիւններ լսելու վճարը այժմեան վճարից մինչև 50% շատացնելուն, ոչինչ հիմք չունի, որովհետև 1884 թիւ կանոններով կառավարվող համալսարաններում վճարը շատացնելու մասին ոչինչ կարգադրութիւն մինչև այժմ չէ եղել, և ենթադրութիւն էլ չը կայ այդպիսի կարգադրութիւն անելու ապագայի վերաբերութեամբ: «Грждан-ини» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհուրդը շուտով կը քննի բոսնացիները կանոնադրութեան նախագիծը: «Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ Խիվայի խանը, որը երեք տարի է արդէն որ պատրաստվում է ճանապարհորդել Եւրոպայում, այս դարձան անպատճառ գալու է Պետերբուրգ: Նոյն լրագիրը հաղորդում է, որ ընկալական դպրոցները նոր տեսակ դպրոցների վերածելու նախագիծը, որը վերջնականապէս փոփոխված և լրացրած է, շուտով կը ներկայացվի պետական խորհրդի քննութեանը:

Վիեննա, 23 յունվարի «Wiener Abendpost» պաշտօնական լրագիր մէջ հրատարակված է աւստրո-գերմանական պայմանագիրը՝ վերաբերութեամբ 1879 թիւ հոկտեմբերի 7-ի դաշնագրին:

Բեռլին, 23 յունվարի: Սօֆիայից ստացած մասնաւոր տեղեկութիւններին նայելով, Բոլղարիայի հայրենասիրական ընկերութիւնը իր կողմից մտադիր է յայտնել Բոլղարիայի անկախութիւնը: Սկոտլանդից հաղորդում են, մասնաւոր կերպով, որ իբրև թէ թիւրքաց իշխանութիւնը դառն է, որ Զերնոգորիայից արտահանված է զարման կերպով մեծ քանակութեամբ դէնը, որը պէտք է մաքսանենք կերպով հասցնվի Ալբանիա՝ յեղափոխական նպատակների համար:

Սօֆիա, 23 յունվարի: Այն լուրը, թէ Կոստանդնուպոլիսից Զերդինանդ, Սօֆիա վերադառնալուց յետոյ, կը հրատարակվի իբրև Բոլղարիայի թագաւոր, պաշտօնապէս հերքվում է, և յայտնվում է, որ այդ համաձայն չէ կառավարչական պրոպագանդայի հետ:

Պետերբուրգ, 24 յունվարի: Ֆինանսների մի-նիստրութեանը ներկայացվել է մի խնդրագիր կառուածական բանկերի կողմից, որով իրաւունք են խնդրում՝ գրաւ ընդունելու անշարժ կառուած-ներ քաղաքներում: Ֆինանսների տեսակները լաւաց-նող պետական հիմնարկութիւնների կառավարիչը կարելի համարեց թող տալ, որ Մոսկվայում իւ-րաքանչիւր տարի կազմվի վաճառվող ձիաների ցուցահանդէս, սկսելով 1888/9 թիւականի սեզոն-

նից, — զեկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը: Ցու-ցահանդէսի կանոնները շուտով կը հրատարակվեն:

Երեկ յանկարծակի մեռաւ գեներալ-ադիւտանտը կոմս Լէվաշով (Նիկոլայ Վասիլևիչ):

ԲՈՒԽՈՒՆՈՒՄ, 24 յունվարի: Ինժեներական դո-քը շատացրած է՝ չորս նոր գործարար կազմա-կերպութեամբ:

ՍՕՖԻԱ, 24 յունվարի: Պրինց Ֆերդինանդ և-րէկ զուրա գնաց Բուրգասից և այսօր հասաւ Եւմբուրգ:

ՄՕՍԿՎԱ, 24 յունվարի: Ալիւր աղացողներին ժողովին Նիցից ներկայ կը լինեն այդ գործի մի քանի խոշոր ներկայացուցիչները, որոնք կազմել են մի ընդարձակ դրութիւն այն պատճառների մա-սին, որոնք արգելում են ալիւրի արտահանե-լուն ընդհանրապէս և մասնաւորապէս ալիւրի աղացման գործի ընդարձակելուն Ռուսաստա-նում:

ԶԱՐԶՈՒՅ, 24 յունվարի: Այստեղ հասաւ ուսու-սաւանական սահմանագիծը որոշող յանձնաժողո-վը, որը բաղկացած է գլխաւոր շտաբի կապիտան Կոմարովից և անգլիական ծառայութեան մէջ գը-տնվող Պիկոկի և Ետտ մայորներից: Ցանձա-ժողովը կատարելապէս վերջացրել է իր պարապ-մունքները սահմանագիծը որոշելու վերաբերու-թեամբ, ամեն տեղ կանգնեցրած են սահմանա-գլխի սիւներ, վերջին սիւնը կանգնեցրած է Ամու-Կարիայի ձախ ափին, Բասալի գիւղից 15 վերստ դէպի վեր: Ցանձաժողովի անդամները Կելիֆից մինչև Զարջոյ գնացին Ամու-Կարիայով, որը այդ տարածութեան վրա միանգամայն նա-ւադնաց է: Ցանձաժողովի անդամները այցելե-ցին գեներալ Անդրեյովիչին՝ վաղը, յանձնաժողովի անդլական բաժինը, Անդրեյովսկան երկաթուղով վերադառնալու է Լոնդոն:

ՄԵՐՎ, 24 յունվարի: Այսօր զինուորական դա-տարանը մահուան դատապարտեց, կախաղան բարձ-րացնելով՝ երեք պարսիկներին, որոնք շահի հպա-տակ են, և որոնք զեկտեմբերի 12-ին սպանել են երկու լուսաւարացու, որոնք գնում էին Անդրկաս-պեան երկաթուղով՝ քարվանի հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ

Յունվարի 22-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե.	116 ր. 45 կ.
Համբուրգի վրա 100 մարկ	57 > 36 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	46 > >
Ոսկի	9 > 30 >
Մարտային կուպոններ	186 > >
Արծաթ	1 > 32 >
Բորսային դրամներ	6 1/2 > 7 1/2 >
Պետական 5% տոմս 1-ին շրջանի	99 > 75 >
— — — — — 2-րդ —	97 > 75 >
— — — — — 3-րդ —	97 > 75 >
— — — — — 4-րդ —	97 > 75 >

— — — — — 5-րդ —	97 > 75 >
— — — — — 6-րդ —	— > — >
Նոր 4% փոխառութիւն	82 > 12 >
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ.	98 > 25 >
— — — — — 2-րդ —	97 > 50 >
— — — — — 3-րդ —	97 > 62 >
Ներքին 5% առաջին փոխառութիւն	264 > 50 >
երկրորդ —	247 > 50 >
5 1/2% րէնտա	103 > — >
Ոսկեայ րէնտա	194 > 50 >
Յօթերորդ կոնսոլիդաց. փոխառու-թիւն	164 > — >
Նոր երկաթուղային րէնտա	98 > — >
5% գրաւական թղթեր կալուած.	— > — >
փոխ. կրեդ. ընկ.	164 > 50 >
Գրաւ. թղ. Ալիւ. բանկի	98 > — >
5 1/2% գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.	99 > — >
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	102 > — >
— — — — — Պոլտավայի —	101 > 75 >
— — — — — Պետ. Տուրկի. —	102 > — >

— — — — — Կիււի —	101 > 87 >
— — — — — Մոսկվայի —	102 > 25 >
— — — — — Բեսարաբ. Տավր. —	101 > 50 >
— — — — — Նիքի. Սամար. —	101 > 25 >
— — — — — Վիլնայի —	101 > 50 >
— — — — — Թիֆլիսի — 27 և 43 տ.	98 > 50 >
— — — — — Գուրիայի — 18 և 43 տ.	98 > 50 >
Վ. օլժակ-կամսկի բանկի ակցիաները 692 > — >	
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 267 > 50 >	
Բիբինսկ-Վ. օլժակի ընկ.	86 > 25 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ-գացիաներ.	94 > 50 >
Մոսկվայի քաղաք. օրվ. գացիաներ	94 > 50 >
Օդեսայի —	93 > 37 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ.	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը թուլանում է:	

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ռ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲՈՇԿԱՊԵՏ ԲԵՆԿԼԵՎՍԿԻ

ԲՈՇԿԱՊԵՏ ԲԵՆԿԼԵՎՍԿԻ ընդունարանը՝ Հիւանդները ընդունվում են ամեն օր 9-ից մինչև 11 ժամ՝ առաւօտեան և 4-ից մինչև 6 ժամ՝ երեկոյեան. սիֆիլիսի, կոկորդային, քիճային, ակնաշիւք և ատամի ցաւերի բժշկութիւնը, պլոմբը և ատամներ զննելը (ա ս ի ս տ է ն տ ա տ ա մ ն ա բ ո յ ժ Ս օ բ օ լ է վ): Ատամի ցաւով հիւանդների ընդու-նելութիւնը 4-ից մինչև 7 ժամ: Գլուխակի պրոսպեկտ, տուն նախկին Բէյոյ № 5:

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 29 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ զուրա կը գնայ շոգենաւ LE DONNAI (ԼԸ ԴՈՆՆԵ) նաւապետ BERNARD (ԲԵՐՆԱՐ) մտնելով Կ. Պօլս, Զմիռնիա և Սիրա: Ազգանունը՝ ԲԱԹՈՒՄԻՄ Կ. Գ. ԷՍՍԵՆՃԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐՈՐ ԷՆՋՈՒԹԵԱՆ 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, փետրվարի 4-ին, ՄԵՅՈՋ (MEUSE) շոգենաւ, նաւապետ ԹԻԲԱՆ (THIBAL) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլս և Մարսէյը: Տեղեկութիւնների մասին պէտք է գիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Կ. Բէնօին, նախկին Արմուրնի դպրեւան, № 103. 2—4

ՀԱՋՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Յ Ի

ց31-ն Դեկտեմբերի 1887

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բաղուայ բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բաղուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ)	75,934—90	52,705—59	128,640—49	1. Հիմնական դրամադրամ	1,000,000 —	— — —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	810—50	255,000 —	255,810—50	2. Պահեստի դրամադրամ	148,563—31	— — —	148,563—31
3. Աւանդ Մոսկվայի զեղջման բանկայում.	— — —	— — —	— — —	3. Արդիւնք 1885 թ. ի պահեստ	129,491—17	— — —	129,491—17
4. Զեղջում (Disconto) մուրհակաց երկու ստո-րադրութեամբ.	2,241,865—23	615,580—42	2,857,445—65	4. Դրամական աւանդներ՝			
5. Զեղջումն տոկոսաբեր թղթերի, կտրոնների և այլն	29,457—80	1,815—87	31,273—67	ա) Պայմանաժամով	1,658,585 —	77,405 —	1,735,990 —
6. Փոխառութիւն պրաւակայում՝				բ) Գրանց.	223,442 —	61,020 —	284,462 —
ա) Պետութիւնից ապաւ. տոկոսաբ. թղթերի.	819,424—63	149,665 —	969,089—63	գ) Ընթացիկ հաշիւով հաւարակ.	767,421—46	295,741—25	1,063,162—71
բ) > ոչ ապաւ. > > >	196,659 —	7,250 —	203,909 —	դ) > պայմանաւոր.	— — —	166,376—06	166,376—06
գ) ապրանքների	— — —	4,540 —	4,540 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկային թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով և փոխառումն զեղջույ մուրհակներով.	217,915—11	— — —	217,915—11
դ) Ոսկեայ և արծաթի	— — —	11,400 —	11,400 —	6. Թղթակիցներ՝			
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	279,145—27	10,479—09	289,624—36	ա) Նոցա հաշիւը (Loro)	4,628,377—72	— — —	4,628,377—72
8. Ոսկի և արտահանման փոխանակագրեր.	2,746—56	6,980—04	9,726—60	բ) Բանկայի հաշիւը (Nostro)	6,566,891—77	— — —	6,566,891—77
9. Թղթակիցներ՝				7. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութիւն. հետ.	— — —	540,374—31	540,374—31
ա) Նոցա հաշիւը (Loro)	4,741,119—83	— — —	4,741,119—83	Կենտրոն. վարչութիւն. հաշիւը բաժնի հետ.	99,018—85	— — —	99,018—85
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	6,337,760—97	— — —	6,337,760—97	8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրոն-ների բաշիւը 1882, 1883, 1884 և 1886 թ.	921—40	— — —	921—40
10. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութիւն. հետ.	547,832—86	— — —	547,832—86	9. Զը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողու-թեանց.	65,137—65	16,850—93	81,988—58
11. Բողոքուած մուրհակներ *)	383,614—60	— — —	383,614—60	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարա-կաններ	150,777—99	59,050—09	209,828—08
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն-ներ.	7,255 —	400 —	7,655 —	11. Փոխանցիկ դուաններ.	65,881—73	31,443—99	97,325—72
13. Ընթացիկ ծախսեր	42,847—51	13,100—06	55,947—57				
14. Կահւարանի և սկզբնական ծախսեր.	3,701—68	3,582—76	7,284—44				
15. Յետ ստացուելիք ծախսեր.	12,248—82	443—20	12,692—02				
Բ. Ա.	15,722,425—16	1,248,261—63	16,970,686—79	Բ. Ա.	15,722,425—16	1,248,261—63	16,970,686—79

*) Բողոքուած մուրհակներից վճանները, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է առանձին գումար. 129,491 ր. 17 կ.